ՀԱՄԱՑԱՆՑԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

No _____

_____ / _____ / 20____թ.

«Ռեալ Թայմ» ՍՊԸ-ն, այսուհետ «Կատարող», որը գործում է համաձայն իր կանոնադրության, ի դեմս տնօրեն Վ.Լալայանի, մի կողմից և _____, այսուհետ «Պատվիրատու», որը գործում է իր կանոնադրության հիման վրա, ի դեմս _____, մյուս կողմից կնքում են սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

«Կատարողը» տրամադրում է «Պատվիրատուին» համացանցի հասանելիության ծառայություն, հետագայում «Ծառայություններ», իսկ «Պատվիրատուն» պարտավորվում է վճարել մատուցված ծառայությունների դիմաց:

2. «Կատարողի» պարտավորությունները և իրավունքները

2.1 Ապահովել «Պատվիրատուին» պատկանող մեկ համակարգչի կամ այլ ցանցային սարքի միացումը համացանցին «Կատարողի» հանրային էլեկտրոնային ցանցի միջոցով՝ այսուհետ «հասանելիության կետ»:

2.2 Ապահովել «հասանելիության կետի» անխափան աշխատանքը:

2.3 Խափանումների դեպքում ստույգ տեղեկացնել «Պատվիրատուին» վերանորոգման/վերականգնման ժամանակահատվածի մասին:

2.4 Ժամանակին տեղեկացնել «Պատվիրատուին» պրոֆիլակտիկ և այլ աշխատանքների մասին, որոնք կբերեն կապի ժամանակավոր ընդհատմանը:

3. «Պատվիրատուի» պարտավորությունները և իրավունքները

3.1 «Պատվիրատուն» իրավունք ունի ցանկացած ժամանակ ստուգել «Կատարողի» կողմից մատուցվող «Ծառայության» ընթացքը և որակը՝ առանց միջամտելու «Կատարողի» գործունեությանը:

3.2 Պահպանել համակարգչային ցանցերում գործող ընդհանուր օրինակարգը, խուսափել ցանցը անտեղի ծանրաբեռնելուց, օրինակ՝ վիրուսակիր ծրագրերից, որոնք կարող են խանգարել ցանցի այլ մասնակիցների աշխատանքին:

3.3 Եթե «Պատվիրատուն» ունի հասանելիության կետի բաշխման խնդիր ներքին համակարգչային ցանցի միջև, կամ այլ լուծում, որը կապված է ծրագրային կամ լրացուցիչ սարքավորումների և/կամ միջոցների ձեռքբերման, կարգավորման/տեղադրման հետ, ապա սույն ծախսերը և լուծումները/սպասարկումը իրականացնում է միայն «Պատվիրատուն»:

3.4 Կապի ընդհատման դեպքում «Պատվիրատուն» իրավունք ունի զանգ կատարել «Կատարողի» գրասենյակ տեխնիկական խնդրի պատճառը և դրա վերացման ժամանակահատվածը պարզելու համար:

3.5 Սպասարկման հեռախոսահամարները և աշխատանքային ժամերը նշվում են սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված 1-ում ներկայացված գնային պլանի մեջ, ինչպես նաև ընկերության կայքում "http://www.realtime.am":

3.6 «Կատարողի» հանրային էլեկտրոնային ցանցի միացումը կատարվում է «Պատվիրատուի» միջոցներով:

4. Ծառայության գները, որակական, տեխնիկական պայմանները և վճարումները

4.1 Սույն պայմանագրով 'Կատարողը' տրամադրում է «Պատվիրատուին» ոչ երաշխավորված թողունակությամբ առավելագույնը __ (___) մեգաբիթ/վարկյան, իսկ նվազագույնը ___ (___) մեգաբիթ/վարկյան՝ արագության համացանցի հասանելիության կապուղի՝ պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված 1-ի գնացուցակում նշված _____ սակագնային պլանի համաձայն:

4.2 'Կատարողի' կողմից տրամադրված ծառայության գումարը կազմում է ամսական _____ (_____ հազար) ՀՀ դրամ:

4.3 «Պատվիրատուն» վճարումները կատարում է բանկային փոխանցումով՝ «Կատարողի» բանկային հաշվին վճարումներ կատարելով:

4.4 «Կատարողը» յուրաքանչյուր ամսվա վերջին հաշվարկում և պատվիրատուին է ներկայացնում հաշիվ-ապրանքագիր մատուցված ծառայությունների դիմաց:

4.5 «Պատվիրատուի» իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում վճարումները կատարվում են հետվճարային հիմունքներով, յուրաքանչյուր ամսվա համար: Վճարումները կատարվում են 15 (տասնհինգ) օրվա ընթացքում «Կատարողի» կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրի համաձայն:

4.6 Խափանումների և դրանց վերացման առավելագույն ժամանակահատվածը նախատեսում է 24 ժամ՝ մեկ ամսվա համար (անփոխհատույց): Տվյալ ժամանակահատվածը գերազանցելու դեպքում գրանցվում է պարապուրդ: Խափանումն ուղղելուց հետո, «Կատարողը» բաժանորդին տրամադրում է ծառայություններից օգտվելու լրացուցիչ ժամեր պարապուրդի չափով:

4.7 Բոլոր հաշվարկները և վճարումները կատարվում են ՀՀ դրամով:

5. Կողմերի պատասխանատվությունները

5.1 Սույն պայմանագիրը կնքվում է մեկ տարի ժամկետով:

5.2 Սույն պայմանագրով նշված պարտավորությունները չկատարելու դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում ըստ սույն պայմանագրի համապատասխան կետերի և ՀՀ գործող օրենսդրության:

5.3 Եթե «Պատվիրատուն» խախտել է սույն պայմանագրի պայմանները, «Կատարողը» իրավունք ունի դադարեցնել ծառայությունների մատուցումը:

5.4 «Կատարողը» պատասխանատվություն չի կրում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու համար այն դեպքում, երբ դա պայմանավորված է «Կատարողի» կողմից չկարգավորվող հանգամանքներով և պատճառներով, որոնցից են՝ ՀՀ տարածքից դեպի դուրս և նրա տարածքում համացանցի աշխատանքի խափանումը, ինչպես նաև «Պատվիրատուի» համակարգչի(ների) կամ վերջինիս լոկալ ՀՑ աշխատանքի խափանումները:

5.5 «Կատարողը» պատասխանատվություն չի կրում, իսկ «Պատվիրատուն» պատասխանատվություն է կրում իր կողմից համացանցից ներբեռնված և ուղարկված տեղեկատվության բնույթի, ծավալի և անձեռնմխելիության համար:

5.6 «Կատարողը» պատասխանատվություն չի կրում «Պատվիրատուի» համակարգչից տվյալների կորստի համար, «Պատվիրատուի» համակարգիչ ոչ թույլատրված մուտքի համար, որը պայմանավորված է եղել ինչ-որ ճանապարհով տարածված համակարգչային վնասակար ծրագրի գործունեության կամ այլ պատճառներով:

6. Լրացուցիչ պայմաններ

6.1 «Պատվիրատուն» իրավունք չունի կատարել գործողություններ, որոնք կարող են խափանել ՀՑ-ի աշխատանքը: Պատճառել նյութական կամ ֆինանսական վնաս ՀՑ-ի մյուս մասնակիցներին, այդ թվում «Կատարողին»:

6.2 «Կատարողը» իրավունք ունի անջատել «Պատվիրատուի» «հասանելիության կետը» համացանցից համաձայն 5.1 կետով նշված դեպքերում, մինչև միջադեպի կարգավորումը, ընդ որում, անջատման ժամանակահատվածը չի մտնում ծառայությունների մատուցման պարապուրդի հաշվարկի մեջ:

6.3 Բացի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերից «Կատարողը» իրավունք չունի տրամադրել երրորդ կողմին տեղեկություններ «Պատվիրատուի» կողմից ՀՑ-ի հետ փոխանակած ինֆորմացիայի վերաբերյալ:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1 Սույն «Պայմանագրով» պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար «Կողմերն» ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը «Կողմերը» չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի, ապա «Կողմերից» յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել «Պայմանագիրը»՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Պայմանագրի դադարեցման պայմանները

8.1 Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել պայմանագրի գործունեությունը մյուս կողմին գրավոր նախազգուշացնելուց 15 (տասնհինգ) օր առաջ այն դեպքում, երբ մյուս կողմը չի կատարում սույն պայմանագրում նշված պարտավորությունները:

8.2 Պայմանագրի գործունեությունը կարող է դադարեցվել նաև կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

8.3 Պայմանագրի գործունեությունը դադարեցնելիս «Պատվիրատուն» պարտավոր է վճարել մինչև ընդհատման պահը մատուցված ծառայությունների համապատասխան գումարը, ինչպես նաև վերադարձնել «Կատարողի» կողմից տրամադրված սարքավորումները:

8.4 Պայմանագրի գործունեությունը դադարեցնելիս «Կատարողը» պարտավորվում է վերադարձնել պատվիրատուին վճարված և չսպառած մնացորդ գումարը:

8.5 Պայմանագրի գործունեության դադարեցման դեպքում ֆինանսական փոխհատուցման հարցերը լուծվում են կողմերի փոխադարձ համաձայնեցմամբ կամ դատարանի միջոցով:

9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագրի բոլոր լրացումներն ու փոփոխությունները կատարվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ և հանդիսանում Պայմանագրի անբաժանելի մասը:

9.2 Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով՝ երկու իրավահավասարազոր օրինակներից և ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագիրը մնում է ուժի մեջ կողմերի բանկային ռեկվիզիտների, հիմնադիր փաստաթղթերի, կազմակերպաիրավական ձևերի փոփոխության դեպքում:

9.3 Պայմանագրի կետերի ցանկացած փոփոխության դեպքում կողմերը պարտավորվում են 15 (տասնհինգ) օրվա ընթացքում տեղեկացնել միմյանց:

10. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Կատարող՝ «Ռեալ Թայմ» ՍՊԸ	Պատվիրատու՝
Իրավ.հասցե՝	Իրավ.հասցե՝
ՀՎՀՀ՝	ՀՎՀՀ՝
Բանկ՝	Բանկ՝
Հ/Հ՝	Հ/Հ՝
Տնօրեն՝ Վահե Լալայան	Տնօրեն՝
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1

ՀՀ ք. Երևան, Կոմիտաս 49/4
E-mail: support@realtime.am

http://www.realtime.am

Beeline 091 19 52 65 VIVA CELL 094 19 52 65 Ucom 055 19 52 65

Աշխատանքային ժամեր՝ ԵՐԿ – ՈՒՐԲ - 10:00 - 19:00

Հերթապահության ժամեր՝ ԵՐԿ – ՈՒՐԲ - 10:00 - 22:00
ՇԱԲԱԹ - 11:00 - 22:00
ԿԻՐԱԿԻ - 12.00 - 17.00

_____ /_____ / 2018թ

Ծածկանուն: _____ Գաղտնաբառ: _____

Ինտերնետ հասանելիության սակագներ 12.01.2016թ.

Կորպորատիվ (միասնական օգտագործման կամ իրավաբանական անձանց համար)

Անսահմանափակ ծավալով ինտերնետ փաթեթներ

Ծառայություններ	Արագություն (ֆիքսված - մուտքային / ելքային)	Սակագին (մեկամսյա վճար)
Կորպորատիվ *Ա*	**4 / 4** Մբիթ/վ	12000
Կորպորատիվ *Բ*	**6 / 6** Մբիթ/վ	15000

Տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության այլ ծառայություններ իրականացվում են պայմանագրային հիմունքներով: Խնդրում ենք դիմել 'Ռեալթայմ' ՍՊԸ գրասենյակ:

Վճարում բանկային փոխանցումով

Բանկ՝ Ինեկոբանկ ՓԲԸ **Հ/Հ՝ 2050022059901001** **Ստացող՝ "Ռեալ Թայմ" ՍՊԸ**	Նաև խնդրում ենք նշել **մեզ մոտ գրանցված** անձի անուն ազգանունը և (ցանկալի է) **"փոխանցման նպատակ"** դաշտում նշել **ծածկանունը**: Ուշադրություն - ԳԱՂՏՆԱԲԱՌԸ ՆՇԵԼ ՊԵՏՔ ՉԵ

Ընդհանուր պայմաններ

Բաժանորդային միացման (լոկալ ցանցի) արագությունը չի ֆիքսվում և բաշխվում է այդ պահին օգտագործողների մեջ հավասարաչափ: Գնացուցակի բոլոր ինտերնետային փաթեթները գտնվում են մեկ համընդհանուր գծի մեջ և բաշխվում են այդ պահին օգտագործողների միջև համապատասխան, այդ իսկ պատճառով նշված արագությունները չեն կարող հանդիսանալ հաստատուն (CIR) արագություններ: Խափանումների և դրանց վերացման առավելագույն ժամանակահատվածը նախատեսում է 24ժ մեկ ամսվա համար (անփոխհատույց): Տվյալ ժամանակահատվածը գերազանցելու դեպքում բաժանորդին լրացուցիչ տրվում է խափանմանը համապատասխան ժամերի չափով ծառայությունից օգտվելու հնարավորություն:

Հավելված 2

Բաժանորդային միացման համար օգտագործված սարքավորումներ

կից պայմանագիր No _____
_____ / _____ / 20 ___ թ.

Սույն հավելվածը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը և վավերական է միայն պայմանագրի առկայության դեպքում:

«Ռեալ Թայմ» ՍՊԸ-ն, այսուհետ «Կատարող», որը գործում է համաձայն իր կանոնադրության, ի դեմս տնօրեն Վ.Լալայանի, պայմանագրի պայմանների ապահովման համար «Պատվիրատուին» է հանձնում հետևյալ գույքը.

հ/հ	Անվանումը	Քանակը	Գինը	Գումարը
1	Մալուխ	X մ	200	
2	VLAN բաժանարար	Y հատ	8000	
3	Մոդեմ	1 հատ		
4				
5				
6				

1. Համացանցի հասանելիության ապահովման համար միացումները կատարվում են «Կատարողի» կողմից անվճար՝ «Պատվիրատուի» անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ լինելու դեպքում:
2. Սարքավորումները տրվում են «Պատվիրատուին» անվճար, որը չի հանդիսանում նրա սեփականությունը :
3. Պատվիրատուն իրավունք չունի սարքավորունները փոխանցել որևէ ձևով երրորդ անձի և պատասխանատու է դրանց կորստի, ինչպես նաև վնասվածքների համար աղյուսակ 1-ում նշված համապատասխան գումարի չափով:
4. Պայմանագրի դադարելու դեպքում «Պատվիրատուն» պարտավոր է ետ վերադարձնել իրեն հատկացված սարքավորումները:

Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Կատարող՝ «Ռեալ Թայմ» ՍՊԸ

Իրավ.հասցե՝
ՀՎՀՀ՝
Բանկ՝
Հ/Հ՝

Տնօրեն՝ Վահե Լալայան

_____
(ստորագրություն)

Կ.Տ.

Պատվիրատու՝

Իրավ.հասցե՝
ՀՎՀՀ՝
Բանկ՝
Հ/Հ՝

Տնօրեն՝

_____
(ստորագրություն)

Կ.Տ.